ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0026, ՀՀ, ք.Երևան,Գ.Նժդեհի 23, հեռ.(0037410) 448894 /116 /, էլ.փոստ. qrver-dataran@mail.ru

№-ԴԴ-8-Ե 8010/15
Գործ թիվ ԵԿԴ/0014/11/15

<< 22 >> ապրիլի 2015թ.

ԴԻՄՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ
/ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկվում է << Վերաքննիչ քրեական դատարանի 2015թ. ապրիլի 22-ի որոշման պատճենը:

Առդիր՝ որոշման պատճենը 14 թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ *Գ.ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ*

2015թ.
Գործ հ. ԵԿԴ/0014/11/15

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2015թ. ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ս.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
քարտուղարությամբ՝ Ռ.Դավոյանի

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
դատախազ՝ Կ.Բիշարյանի
դիմողի ներկայացուցիչ՝ Ա.Զալյանի

դռնբաց դատական նիստում դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանի վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգելով <<Բողոքը քննության առնելու մասին>> Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

02.04.2014թ. <<Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայությանը հաղորդում է տրվել ՀՀ ԱՆ <<Արթիկ>> քկի կալանավորներ Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի և Ջոն Մարտիրոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից անմարդկային վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

10.04.2014թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Շիրակի մարզի քննչական բաժնում քննվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 18130813 քրեական գործով մեղադրյալներ Ռոբերտ Մուրադյանը և Անդրանիկ Մխիթարյանը ՀՀ հատուկ քննչական ծառայությանը հաղորդումներ են տվել այն մասին, որ 2013թ. հոկտեմբերին, ավազակային հարձակում կատարելու կասկածանքով ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի ոստիկանության Մուշի բաժին բերման ենթարկվելուց հետո խոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով իրենց նկատմամբ կիրառվել է բռնություն ոստիկանության աշխատակիցների կողմից:

Դեպքի առթիվ 14.04.2014թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62207614 քրեական գործը և կատարվել նախաքննություն:

Նախաքննության մարմնի 2014թ. հոկտեմբերի 03-ի որոշմամբ թիվ 62207614 քրեական գործով վարույթը կարճվել է՝ Սարգիս Մարտիրոսյանի, Խաչատուր Պետրոսյանի, Հակոբ Աղաբեկյանի, Գուրգեն Ալեքսանյանի, Արթուր Գրիգորյանի, Կարեն Մարտիրոսյանի Հայկ Մարտիրոսյանի, Վիգեն Մարգարյանի կամ ոստիկանության այլ աշխատակիցների նկատմամբ բռնությամբ

զուգորդված պաշտոնական լիազորությունները անցնելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-309-րդ հոդվածներով, Արթուր Գրիգորյանի և Կարեն Մարտիրոսյանի կողմից պաշտոնական կեղծիք կատարելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով կամ ծառայության դեմ ուղղված որևէ հանցագործություն կատարելու համար հետապնդում չի իրականացվել՝ վերջիններիս արարքներում հանցակազմի բացակայության հիմքով: Ռոբերտ Մուրադյանի և Անդրանիկ Մխիթարյանի կողմից սուտ մատնություն կատարելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջիններիս արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

17.12.2014թ. <<ՀՔԱ Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ա.Զալյանը ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի <<Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշման դեմ բողոք է ներկայացրել ՀՀ Գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 03.10.2014թ. որոշումը:

ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղալյանի 24.12.2014թ. որոշմամբ <<ՀՔԱ Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ա.Զալյանի բողոքը թիվ 62207614 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի <<Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշման դեմ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

06.02.2015թ. <<ՀՔԱ Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որով խնդրել է վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի՝ <<Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.02.2015թ. որոշմամբ Արթուր Սաքունցի դիմում-բողոքն ըստ ընդդատության ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշմամբ <<Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի 03.10.2014թ. որոշումը վերացնելու վերաբերյալ դիմող Ա.Սաքունցի և դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանի բողոքը մերժվել է:

Ընդհանուր իրավասության դատարանի վերոնշյալ որոշման դեմ փոստին հանձնելու միջոցով 30.03.2015թ. վերաքննիչ բողոք է բերել դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանը:

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 13.04.2015թ. որոշմամբ դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է Վերաքննիչ դատարանի վարույթ և դատական նիստում քննության է նշանակվել 2015թ. ապրիլի 22-ին:

2.Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները.

Առաջին ատյանի դատարանը դիմող՝ <<ՀՔԱ Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի և վերջինիս ներկայացուցիչ Ա.Զալյանի բողոքը մերժել է՝ հետևյալ պատճառաբանությամբ:

<<Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշման մեջ քննիչը պատճառաբանել է, որ <<Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողությունները հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման նպատակով, և գնահատելով նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ չի հիմնավորվել ու չի հաստատվել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի նախկին պետ Սարգիս Մարտիրոսյանի, ՔՀԲ պետի տեղակալ Խաչատուր Աշոտի Պետրոսյանի, ՔՀԲ օպերլիազորներ Հակոբ Գեղամի Աղաբեկյանի, Գուրգեն Արամի Ալեքսանյանի և նույն բաժնի նախկին օպերլիազոր Արթուր Լևոնի Գրիգորյանի կողմից Ռոբերտ Մուրադյանի և Անդրանիկ Մխիթարյանի նկատմամբ բռնություններ կամ արժանապատվությունը նվաստացնող այլ միջոցներ կիրառելու, նույն բաժնի օպերլիազոր Կարեն Մարտիրոսյանի և Արթուր Գրիգորյանի կողմից Ռ.Մուրադյանին ոստիկանության բաժին բերման ենթարկելու վերաբերյալ կեղծ արձանագրություն կազմելու, նույն բաժնում ազատությունից ապօրինի զրկելու, ոստիկանության աշխատակցի կողմից Ա.Մխիթարյանի ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերված դանակը Ն.Կոլեսնիկովին և Պ.Պանովին ցույց տալու, ինչպես նաև՝ քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի կողմից՝ իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կիրառած խոշտանգումների մասին Ռ.Մուրադյանի հայտարարությունները չարձանագրելու հանգամանքները, և դրանք հիմնավորելու համար հնարավոր չի եղել ձեռք բերել բավարար ապացույցներ, իսկ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառվել են, ուստի, նշված փաստերով Սարգիս Մարտիրոսյանի, Խաչատուր Պետրոսյանի, Հակոբ Աղաբեկյանի, Գուրգեն Ալեքսանյանի, Արթուր Գրիգորյանի, Կարեն Մարտիրոսյանի, Հայկ Մարտիրոսյանի, Վիգեն Մարգարյանի կամ ոստիկանության այլ աշխատակիցների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ և 314-րդ հոդվածներով հետապնդում չի կարող իրականացվել՝ վերջիններիս արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Միևնույն ժամանակ, քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն եղել Ռոբերտ Մուրադյանի և Անդրանիկ Մխիթարյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված սուտ մատնություն հանցակազմի առկայության վերաբերյալ եզրահանգում կատարելու համար, հետևաբար վերջիններիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով քրեական հետապնդում չի կարող իրականացվել՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով>>:

<<Բողոքը մերժելու մասին>> 24.12.2015թ. որոշման մեջ դատախազը նշել է. <<Վարույթն իրականացնող մարմինն ունեցել է ապացույցների բավարար համակցություն՝ ոչ հավաստի գնահատելու իրենց խոշտանգելու և ապօրինի ազատությունից զրկելու վերաբերյալ Ա.Մխիթարյանի և Ռ.Մուրադյանի հաղորդած և իրենց ցուցմունքներում հայտնած տեղեկությունները:

Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի որոշման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ /.../ եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է

խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝<<իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման>> պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն:

Մինչդեռ, իրենց խոշտանգելու վերաբերյալ Ա.Մխիթարյանի և Ռ.Մուրադյանի տված հաղորդումներում և ցուցմունքներում արված հայտարարությունների՝ վստահելիության չափանիշին համապատասխանության հանգամանքը կասկածի տակ է դրվում ինչպես խոշտանգման փաստի մասին վկայող օբյեկտիվ տվյալների բացակայության, այնպես էլ իրենց ենթադրաբար խոշտանգելուց շուրջ հինգ ամիս անց այդ մասին հայտարարելու պատճառով: /.../ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի ծառայողների կողմից բռնությամբ զուգորդված իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործով փաստական տվյալներ ձեռք չեն բերվել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի նախկին պետ Սարգիս Մարտիրոսյանի, ՔՀԲ պետի տեղակալ Խաչատուր Պետրոսյանի, ՔՀԲ օպերլիազորներ Հակոբ Աղաբեկյանի, Գուրգեն Ալեքսանյանի, Կարեն Մարտիրոսյանի և նույն բաժնի նախկին օպերլիազոր Արթուր Գրիգորյանի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ՔԳՎ Շիրակի մարզային վարչության քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի մասին>>:

Այսպիսով, դատարանը գտել է, որ քննիչ Ռ.Գևորգյանի՝ <<Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշումն օրինական է և հիմնավորված:

<u>3.Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները.</u>

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանն իր ներկայացրած վերաքննիչ բողոքում գտնում է, որ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ, 25-րդ, 124-րդ, 127-րդ և 153-րդ, հոդվածները.

Այսպես, 2014թ. հոկտեմբերի 3-ի ՀՔԾ քննիչ Ռ.Գևորգյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Կայացված որոշման ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ նախաքննության մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները կատարվել են թերություններով և նրա կողմից օբեկտիվորեն չի գնահատվել գործում առկա ապացույցները:

Սույն գործի շրջանակներում նախաքննության մարմինը ձեռքի տակ ունենալով Ռոբերտ Մարտիրոսյանի, Անդրանիկ Մխիթարյանի, Շողիկ Մուրադյանի և ոստիկանության աշխատակիցներ Սարգիս Մարտիրոսյանի, Խաչատուր Պետրոսյանի, Հակոբ Աղաբեկյանի Գուրգեն Ալեքսանյանի Արթուր Գրիգորյանի կողմից տրված իրարամերժ ցուցմունքները, արժանահավատ է համարել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները, իսկ Ռ.Մարտիրոսյանի, Ա.Մխիթարյանի ցուցմունքներն այն մասին, որ իրենց ենթարկել են խոշտանգումների արժանահավատ չի համարվել:

Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման 7-րդ էջի առաջին պարբերությունում ասվում է. <<Ինչ վերաբերվում է Ա.Մխիթարյանի այն հայտարարությանը, որ քննիչները չեն արձանագրել ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություններ

գործադրելու մասին արված հայտարարությունը հերքվել է ինչպես քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի, այնպես էլ Ա.Մխիթարյանի պաշտպան Ժ.Պետրոսյանի ցուցմունքներով>>:

Վկայակոչված մեջբերումը թույլ է տվել պնդելու, որ նախաքննության մարմնի կողմից հարցաքննվել է նաև ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Ժորա Պետրոսյանը:

ՀՀ փաստաբանության մասին օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն <<Արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կամ իրեն դիմելու կապակցությամբ: /..../>>:

Սույն պարագայում ՀՊԳ փաստաբան Ժ.Պետրոսյանին նախաքննությունն իրականացնող մարմինը հարցաքննել է ՀՀ փաստաբանության մասին օրենքի 21-րդ հոդվածի խախտմամբ, հետևաբար օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցը չէր կարող առհասարակ նրա կողմից գնահատվել որպես ապացույց:

Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման 7-րդ էջի երկրորդ պարբերությունում ասվում է. <<Ռ.Մովսիսյանի հայտարարությունն այն մասին, թե ինքնակամ է ներկայացել ոստիկանության բաժին, հերքվել է ինչպես Ռ.Մուրադյանի և Շ.Մուրադյանի, այնպես էլ Ա.Գրիգորյանի ցուցումունքներով, համաձայն որոնց Ռ.Մուրադյանը Ա.Գրիգորյանի հետ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մոտ հանդիպել է վերջինիս կողմից իրականացված օպերատիվ միջոցառումների արդյունքում, այլ ոչ թե կամովին ներկայացել է ոստիկանության Մուշի բաժին, իսկ հիշյալ տեղից արդեն բերման է ենթարկվել, քանզի Ա.Գրիգորյանը պահանջել է իր հետ ներկայանալ բաժին՝ միաժամանակ ապահովելով նրա հնարավոր փախուստի կանխումը>>:

Վկայակոչված մեջբերման վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ Ռ.Մուրադյանն իր կամքով է ներկայացել պայմանավորված վայր, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մոտ ոստիկանություն ներկայանալու նպատակով:

Մինչդեռ, ոստիկանության աշխատակիցները Ռ.Մուրադյանին և Մ.Մխիթարյանին բերման ենթարկելիս չեն ներկայացրել անձին բերման ենթարկելու մասին որոշում, ինչպես նաև չի ներկայացվել նրանց իրավունքները և պարտականությունները:

Բերման ենթարկելը դատավարական հարկադրանքի միջոց է, որի կիրառման դեպքերը, կարգն ու հիմքերը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Սույն պարագայում օրենսդիրը չի նախատեսում բերման ենթարկելու այլ կարգ իսկ նախաքննության մարմնի այն պատճառաբանությունը, թե Ռ.Մուրադյանը Ա.Գրիգորյանի հետ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մոտ հանդիպել է վերջինիս կողմից իրականացված օպերատիվ միջոցառումների արդյունքում, այլ ոչ թե կամովին ներկայացել է ոստիկանություն՝ անհիմն է, քանի որ ոստիկանության աշխատակից Ա.Գրիգորյանի պահանջով ներկայացել է պայմանավորված վայր՝ ոստիկանություն ներկայանալու նպատակով:

Նախաքննություն իրականացնող մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար:

Մասնավորապես, նախաքննության շրջանակներում չի հարցաքննվել Ջիվան Սահակյանը, ով Ռ.Մուրադյանի և Շ.Մուրադյանի հետ միասին գնացել էր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մոտ, որտեղ էլ հանդիպել են ոստիկանության աշխատակից Արթուր Գրիգորյանին: Ջ.Սահակյանի ցուցմունքն էական նշանակություն կարող էր ունենալ գործի ելքի համար քանի, որ ըստ դիմումատու Ռ.Մուրադյանի՝ նրանք իրենց կամքով են ներկայացել ոստիկանություն, իսկ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքով՝ նրանք պատահաբար հայտնաբերել և բերման են եթարկել Ռ.Մուրադյանին:

Նախաքննության շրջանակներում չի հարցաքննվել Ջոն Մարտիրոսյանը, ով 2013թ. հոկտեմբերի 22-ին գտնվել է ոստիկանությունում, լսել է կողքի սենյակից ծեծի ձայներ և նրա հավաստմամբ դրանք եղել են Անդրանիկ Մխիթարյանի ձայները:

Նախաքննության շրջանակներում չի առգրավվել և վերծանվել Գյումրու ոստիկանության Մուշ բաժանմունքում տեղադրված տեսախցիկների կողմից ֆիքսված ձայնագրությունները, որը կարող էր հիմնավորել Ռ.Մուրադյանի, Շ.Մուրադյանի և Ա.Մխիթարյանի կողմից վկայակոչած մի շարք հանգամանքներ:

Նախաքննության շրջանակներում չեն ձեռնարկվել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին բացառել ոստիկանության աշխատակիցների մինչև ցուցմունքներ տալը նախապես պայմանավորվելը:

Սույն դեպքում ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ռ.Գևորգյանը որոշում կայացնելիս չի անդրադարձել վերը թվարկված խախտումներին, որոնք հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ, 376-րդ, 378-րդ և 381-րդ հոդվածների պահանջները, բողոք բերած անձը խնդրում է բեկանել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշումը, ընդունել նոր դատական ակտ, վերացնել <<Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի 03.10.2014թ. որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

4.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգելով <<Բողոքը քննության առնելու մասին>> Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, հանգում է այն հետևության, որ դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանի բերած վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ առաջին ատյանի դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

<< 1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան>>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

<<1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են

ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին>>:

Թիվ 62207614 քրեական գործի քննությամբ հիմնավորվել է հետևյալը.

<<Նախաքննության ընթացքում տուժող Անդրանիկ Մխիթարյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ <<2013թ. հոկտեմբերի 22-ին իր <<Մոսկվիչ>> տեսակի տաքսի ավտոմեքենան կանգնած է եղել Գյումրի քաղաքի փողոցներից մեկում: Երբ մոտեցել է ավտոմեքենային, տեսել է, որ դրա շուրջ տղամարդիկ են հավաքված, ովքեր ներկայացել են որպես ոստիկանության աշխատակիցներ: Նրանց մեջ է եղել ոստիկանության՝ Մուշի բաժնի ՔՀԲ պետի տեղակալ Խաչատուր Պետրոսյանը, ում ինքը նախկինում ճանաչել է: Վերջինս մոտեցել է իրեն և փորձել հարված հասցնել, սակայն ինքը ձեռքով պաշտպանվել է, որում եղած սիգարետի մոխիրը լցվել է աչքը: Ինքը կռացել է և զգացել, որ մի քանի կողմից հարվածներ է ստանում, սակայն չի տեսել, թե ովքեր են հարվածել: Դրանից հետո իրեն նստեցրել են ավտոմեքենա: Խ.Պետրոսյանը նույնպես նստել է այդ ավտոմեքենայի մեջ և սկսել է հարցեր տալ, սակայն պատասխանները նրան չեն բավարարել, և Խ.Պետրոսյանը ապտակել է իրեն: Հասնելով ոստիկանության Մուշի բաժին՝ Խ.Պետրոսյանը իրեն քարշ տալով բարձրացրել է 3-րդ հարկ, մտցրել է մի սենյակ՝ ասելով, որ դա պետի աշխատասենյակն է: Սենյակում մոտ 45 տարեկան մի տղամարդ հարցեր է տվել իրեն այդ օրվա իր գործողությունների մասին, սակայն պատասխանները կրկին չեն բավարարել նրան, վերջինս հայհոյել է իրեն, սպառնացել, որ մոխրամանով կհարվածի գլխին և հրահանգել է Խ.Պետրոսյանին տանել և <<դուբինկան մտցնել հետևը, որ խելքը գլուխը գա>>: Խ.Պետրոսյանը իրեն հանել է այդ աշխատասենյակից, տարել մեկ այլ սենյակ, որտեղ երկու ոստիկան են եղել, վերջիններիս ասել է, որ բացատրեն՝ ինչն ինչոց է,

նշել է, որ պետն է հրահանգել, և հեռացել է: Սենյակում գտնվող ոստիկաններից մեկը մոտեցել և բռունցքով հարվածել է դեմքին: Դրանից հետո կրկին ներս է մտել Խ.Պետրոսյանը և սկսել է սպառնալ՝ պահանջելով հայտնել ճշմարտությունը: Ֆիզիկական ներգործությունը և սպառնալիքները հետապնդել են ավելի շատ հոգեբանական ճնշումներ գործադրելու նպատակ, որոնց ինքը չի դիմացել և համաձայնվել է ցուցմունքներ տալ Ջոն Մարտիրոսյանի դեմ: Ինքը ստորագրել է ցուցմունքները, որից հետո ոստիկանները պահանջել են նույնը հայտնել նաև քննիչի մոտ: Նույն օրը՝ ոստիկանության բաժնում գտնվելու ժամանակ, կատարվել է իր <<Մոսկվիչ>> ավտոմեքենայի զննություն, որի ընթացքում քաղաքացիական համազգեստով մի մարդ կարգադրել է ոստիկանին բեռնախցիկից հանել կացնանման դանակը և ցույց տալ մոտակայքում կանգնած ռուս զինվորականներին: Վերջինս կատարել է հրահանգը: Ռուսները տեսնելով դանակը, գլխով հասկացրել են, որ այն է, ինչից հետո ինքը ստորագրել է թղթերը և վերադարձել ոստիկանության բաժին: Ավտոմեքենան զննելուց հետո ճանաչման են ենթարկել նույն ռուս զինվորականներին, ովքեր ճանաչել են իրեն՝ հայտնելով, որ հանցագործության պահին ինքն է եղել ավտոմեքենայի ղեկին: Միաժամանակ հայտնել է, որ նախաքննության ընթացքում քննիչին պատմել է իր նկատմամբ բռնություն կիրառելու մասին, սակայն վերջինս չի արձանագրել այդ հայտարարությունը: Իսկ ավելի ուշ քննիչի մոտ նման հայտարարություն է արել նաև իր պաշտպան Ժորա Պետրոսյանի ներկայությամբ, ինչը նույնպես չի արձանագրվել>>:

Տուժող Ռոբերտ Մուրադյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ <<հիշյալ ավազակային հարձակումը կատարելու կասկածանքով ձերբակալվել է 2013թ. հոկտեմբերի 27-ին: Հիշյալ օրը իր հեռախոսահամարից զանգահարել և պայմանավորվել է ոստիկանության Մուշի բաժնի օպերլիազոր Արթուր Գրիգորյանի հետ հանդիպել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մոտ: Հանդիպելով ժամը 15-ի սահմաններում՝ միասին գնացել են ոստիկանության հիշյալ բաժին, սակայն ձևակերպել են բերման ենթարկելու մասին արձանագրություն՝ նշելով ժամը 20-ը: Ոստիկանության բաժնում Արթուր Գրիգորյանը, Խաչատուր Պետրոսյանը և Հակոբ Աղաբեկյանը սկսել են ծեծի ենթարկել իրեն՝ պահանջելով ցուցմունքներ տալ, որ տեսել է, թե ինչպես են ընկերները ավազակային հարձակում կատարել, միաժամանակ սպառնացել են, որ այդպիսի ցուցմունքներ չտալու դեպքում կէլեկտրահարեն իրեն: Դրանից հետո քննիչն իրեն ձերբակալել է և ուղարկել ՀՊՎ: Ոստիկանների հասցրած հարվածները ուժեղ չեն եղել, այլ հոգեբանական ճնշումներ գործադրելու եղանակ են հանդիսացել, և դրանցից ինքը մարմնական վնասվածքներ չի ստացել: Միաժամանակ հայտնել է, որ բերման ենթարկվելուց հետո՝ ցանկացել է հրավիրել պաշտպան, սակայն չեն թույլատրել և չեն հրավիրել>>:

Թիվ 18130813 քրեական գործով մյուս մեղադրյալներ Ջոն Մարտիրոսյանը և Դավիթ Գալոյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ <<...իրենց իրավունքները ոչ ոք չի խախտել, ոչ մի բռնություն չի կիրառվել, Ռ.Մուրադյանի և Ա.Մխիթարյանի նկատմամբ բռնություններ կիրառելու վերաբերյալ տեղեկություններ չունեն>>:

Ոստիկանության Մուշի բաժնի պետ Սարգիս Մարտիրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ <<Դեպքի հանգամանքները պարզելու նպատակով նշված ավազակային հարձակման մեջ կասկածվող երիտասարդների հետ, նրանց բերման ենթարկելուց հետո՝ կարճ առանձնազրույց է ունեցել, որի ընթացքում ոչ մի սպառնալիք չի եղել: Ինքը նույնիսկ չի հիշել, թե նրանցից ում հետ է զրուցել, և աշխատակիցներից ով է այդ ժամանակ եղել իր աշխատասենյակում>>:

Ոստիկանության Մուշի բաժնի ՔՀԲ պետի տեղակալ Խաչատուր Պետրոսյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ <<2013թ. հոկտեմբերի 22-ին երկու ռուս զինվորական ոստիկանության Մուշի բաժնում հաղորդում են տվել այն մասին, որ նույն օրը իրենց նկատմամբ ավազակային հարձակում է կատարվել: Նրանք նկարագրել են հարձակվողներին և նրանց ավտոմեքենան:

Նույն օրվա երեկոյան տեղեկություն է ստացվել, որ տուժողների նկարագրած ավտոմեքենային նմանվող մեքենա է նկատվել Գյումրի քաղաքի փողոցներից մեկում: Ինքը և նույն բաժնի պետի տեղակալ Արա Ազնավուրյանը, հասնելով ավտոմեքենայի մոտ, դրա մեջ նկատել են Ջոն Մարտիրոսյանին: Քիչ անց մոտեցել է նաև Ա.Մխիթարյանը: Նրանց նստեցրել են առանձին ավտոմեքենաներ և բերման են ենթարկել ոստիկանության բաժին, որտեղ Ա.Մխիթարյանի և Ջ.Մարտիրոսյանի հետ առանձին-առանձին կարճ զրուցել է բաժնի պետը, որի ընթացքում Ջ.Մարտիրոսյանը և Ա.Մխիթարյանը խոստովանել են ավազակային հարձակում կատարելու փաստը, նույնիսկ հայտնել են մյուս երկուսի անունները, ովքեր եղել են իրենց հետ: Դրանից հետո իրենք կազմել են համապատասխան արձանագրությունները, որից հետո ինքն այլևս այդ գործի հետ առնչություն չի ունեցել:

Խ.Պետրոսյանը հայտնել է նաև, որ ոչ ոք Ա.Մխիթարյանին կամ որևէ մեկին չի ծեծել, ոչ մի ճնշում չի գործադրել, ինքը բաժնում տեսել է Ռ.Մուրադյանին, սակայն նրա հետ նույնիսկ չի էլ զրուցել, և այն տեղեկությունները, թե իբր վերջինիս ծեծի են ենթարկել կամ սպառնացել են, չեն համապատասխանում իրականությանը>>:

Ա.Մխիթարյանի և Ռ.Մուրադյանի նկատմամբ խոշտանգումներ կիրառելու, նրանց սահմանված ժամկետից ավել ոստիկանության բաժնում պահելու, Ա.Մխիթարյանի ավտոմեքենայի զննության ժամանակ հայտնաբերված դանակը ռուս զինվորականներին ցույց տալու վերաբերյալ տեղեկությունները հերքող ցուցմունքներ են տվել նաև ոստիկանության Մուշի բաժնի ՔՀԲ օպերլիազորներ Հակոբ Աղաբեկյանը, Գուրգեն Ալեքսանյանը, Կարեն Մարտիրոսյանը, Ա.Մխիթարյանի <<Մոսկվիչ>> մակնիշի ավտոմեքենայի զննությունը կատարած քննիչ Վիգեն Մարգարյանը, քրեական գործով քննչական խմբի ղեկավար Հայկ Մարտիրոսյանը, ոստիկանության Մուշի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Արա Ազնավուրյանը և նույն բաժնի նախկին աշխատակից Արթուր Գրիգորյանը:

Անդրանիկ Մխիթարյանի անձնական խուզարկությանը որպես ընթերակա մասնակցած Ռուդոլֆ Հարությունյանը, Անդրանիկ Մխիթարյանին ճանաչման ներկայացնելու ժամանակ որպես ընթերակա հրավիրված Գևորգ Ասատրյանը, <<Մոսկվիչ>> ավտոմեքենայի զննությանը որպես մասնագետ մասնակցած Մխիթար Գևորգյանը և նույն ավտոմեքենան զննության ենթարկելու ժամանակ որպես ընթերակա հրավիրված Լևոն Մանուկյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ Մ.Մխիթարյանը հայտարարություններ չի արել իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ, նրա մարմնին վնասվածքներ չեն եղել, և ավտոմեքենայի զննության ժամանակ օտար անձինք, այդ թվում՝ նաև ռուսներ, մոտակայքում չեն գտնվել:

Ռոբերտ Մուրադյանի մայրը՝ Շողիկ Մուրադյանը, ցուցմունքներ է տվել այն մասին, որ <<2013թ. հոկտեմբեր ամսին իրենց տուն է եկել օպերլիազոր Արթուր Գրիգորյանը մի քանի ոստիկանի հետ, և փնտրել են որդուն՝ Ռոբերտ Մուրադյանին: Չգտնելով նրան՝ Ա.Գրիգորյանը թողել է իր բջջային հեռախոսի համարը և ասել, որ Ռոբերտի հայտնվելու դեպքում զանգահարեն: Երբ որդին Եկել է տուն, իրենք տանից զանգահարել են ՄԳրիգորյանին և պայմանավորվել են հանդիպել Գյումրի քաղաքի դատարանի մոտ: Երեկոյան հանդիպելով Ա.Գրիգորյանին՝ կարճ զրույց են ունեցել նրա հետ, որից հետո միասին գնացել են ոստիկանության բաժին: Բաժնում Ա.Գրիգորյանը արգելել է իրեն բարձրանալ վերև և որդու հետ մտել է բաժնի շենք: Քիչ անց Ա.Գրիգորյանը դուրս է եկել բաժնից և հեռացել: Դրանից հետո ինքը լսել է որդու բղավոցները, ով ասել է, որ իրեն չհարվածեն և չհայհոյեն, որը տևել է մոտ մեկ ժամ: Ինքը ցանկացել է բարձրանալ վերև, սակայն ոստիկանները չեն թույլատրել: Քիչ անց պնդել և բարձրացել է ոստիկանության բաժնի 4-րդ հարկ, որտեղ սենյակներից մեկում հանդիպել է որդուն: Իրեն թվացել է, թե որդու

մազերը խոնավ են եղել, վնասվածքների առկայությունը չի ստուգել, միայն հարցրել է, թե արդյոք նրան չեն ծեծել, ինչին Ռ.Մուրադյանը ասել է, որ ոչ:

Այն հարցին, թե ինչու է իրավապաշտպանների մոտ հայտարարել, որ որդուն ցերեկային ժամի են բերման ենթարկել, սակայն հարցաքննության ժամանակ հայտնել է, որ երեկոյան ժամ է եղել, Շ.Մուրադյանը պատասխանել է, որ չի հիշում, թե ինչ ժամ է հայտնել իրավապաշտպանների մոտ, ապա հայտարարել է, որ, իր հիշելով դեռ լույս է եղել>>:

Շ.Մուրադյանի հայտնած տեղեկությունները ստուգելու նպատակով հարցաքննվել են ոստիկանության Մուշի բաժնի ավագ տեսուչ-հերթապահ Համլետ Մկրտչյանը և հերթապահի օգնական Սարգիս Բերնեցյանը, ովքեր հերթապահել են 2013թ. հոկտեմբերի 27-ին: Վերջիններս հայտնել են, որ <<...այդ օրը ավազակային հարձակում կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել Ռոբերտ Մուրադյանը, ում միանգամից ուղեկցել են ՔՀԲ>>: Այդ մասին համապատասխան գրառում է կատարվել բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանում, համաձայն որի՝ Ռ.Մուրադյանը բերման է ենթարկվել 2015-ին, իսկ բաժնից ՁՊՎ է տեղափոխվել ժամը 22-ին, և այդ ժամերը միանշանակ համապատասխանում են իրականությանը, հակառակ դեպքում հերթապահները զեկուցագիր են ներկայացնում բաժնի ղեկավարությանը: Ինչ վերաբերում է բերման ենթարկվածի նկատմամբ բռնություն կիրառելուն, ապա դա բացառված է, բացի այդ, եթե նույնիսկ ՔՀ բաժանմունքում ինչ-որ մեկը բղավի, ապա այդ բղավոցը հնարավոր չէ լսել բաժնի բակում կանգնած, որովհետև այդ բաժնի շենքը նորակառույց է՝ համալրված հերմետիկ փակվող պատուհաններով և դռներով, հոկտեմբեր ամսին Գյումրի քաղաքում բավականին ցուրտ է, աշխատասենյակների դռները և պատուհանները փակ են, և նման պարագայում հնարավոր չի լինի 4-րդ հարկից ինչ-որ ձայներ լսել: Քիչ հավանական է նաև այդպիսի ձայներ լսել՝ բաժնի նախասրահում կանգնած, որովհետև կրկին դռները և պատուհանները փակ են, բացի այդ էլ, նախասրահում քաղաքացիները չեն սպասում, սպասում են դրսում, և երբ համապատասխան աշխատակիցն ազատվում է, ապա նրանց ուղեկցում են այդ աշխատասենյակ: Իրենք չեն ճանաչել Շ.Մուրադյանին, սակայն չի եղել այնպիսի դեպք, որ քաղաքացին ցանկանար բարձրանալ աշխատակիցներից որևիցե մեկի մոտ, և նրան մերժեն: Իրենք նույնպես բղավոցի ձայներ չեն լսել>>:

Հ.Մկրտչյանի և Ա.Բերենցյանի ցուցմունքները հիմնավորվել են նաև ոստիկանության Մուշի բաժնի վարչական շենքի զննությամբ:

Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի, Շողիկ Մուրադյանի և ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ առերեսվել են՝ Ռ.Մուրադյանը՝ Մ.Գրիգորյանի, Հ.Աղաբեկյանի, Կ.Մարտիրոսյանի և Խ.Պետրոսյանի հետ, Մ.Մխիթարյանը՝ Խ.Պետրոսյանի և Հ.Աղաբեկյանի հետ, Շ.Մուրադյանը՝ Հ.Մկրտչյանի հետ:

Ոստիկանության հիշյալ բոլոր աշխատակիցները առերեսումների ժամանակ պնդել են նախկինում իրենց տված ցուցմունքները:

Ռ.Մուրադյանը Մ.Գրիգորյանի հետ առերեսման ժամանակ, ցուցմունք տալով 2013թ. հոկտեմբերի 27-ին Ա.Գրիգորյանի հետ հանդիպման հանցամանքների վերաբերյալ, հրաժարվել է շարունակել առերեսումը և պատասխանել հարցերին՝ հայտարարելով, որ <<Ա.Գրիգորյանն իրեն չի ծեծել, նրա նկատմամբ բողոք չանի՝ այդ մասին անձամբ գրառում կատարելով առերեսման արձանագրությունում: Հ.Աղաբեկյանի, Կ.Մարտիրոսյանի և Խ.Պետրոսյանի հետ առերեսումների ժամանակ Ռ.Մուրադյանը պնդել է նախկինում տված ցուցմունքները, սակայն ուշագրավ է այն փաստը, որ նախկին ցուցմունքներում իր նկատմամբ խոշտանգումներ կիրառող երրորդ անձ նշել է Ա.Գրիգորյանին, սակայն վերջինիս հետ առերեսումից հետո՝ մյուս առերեսումների ժամանակ, հայտարարել է, որ չի հիշում, թե ով է եղել երրորդ անձը, ով իրեն ծեծել է>>:

Ա.Մխիթարյանը հիշյալ երկու անձանց հետ առերեսումների ժամանակ պնդել է, իր նախկինում տված ցուցմունքները, որից հետո դիմում է ներկայացրել՝ խնդրելով դադարեցնել առերեսումները ոստիկանության աշխատակիցների հետ, քանի որ նրանք, միևնույն է, հերքելու են իր հայտնած տեղեկությունները:

Շ.Մուրադյանի և Հ.Մկրտչյանի առերեսման ժամանակ նրանք պնդել են իրենց ցուցմունքները:

Զննության են ենթարկվել <<Արթիկ>> ՔԿՀ-ում Ռ.Մուրադյանի, Մ.Մխիթարյանի. Դ.Գալոյանի և Ջ.Մարտիրոսյանի վերաբերյալ կազմված անձնական գործերը և բժշկական անկետաները, սակայն զննությամբ հիշյալ փաստաթղթերում ՔԿՀ ընդունվելիս այդ անձանց մարմինների վրա վնասվածքների վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել:

Հարցաքննվել են <<Արթիկ>> ՔԿՀ բուժքույր Անահիտ Գալստյանը և նույն ՔԿՀ բուժակ Գոռ Հարությունյանը, ովքեր ընդունել և բուժզննության են ենթարկել Ռ.Մուրադյանին, Ա.Մխիթարյանին և Դ.Գալոյանին:

Մ.Գալստյանը և Գ.Հարությունյանը հայտնել են, որ 2013թ. հոկտեմբերի 26-ին և 30-ին ՔԿՀ են բերվել Ռ.Մուրադյանը, Ա.Մխիթարյանը և Դ.Գալոյանն, ում իրենք ենթարկել են բժշկական զննության, սակայն նրանց մարմինների վրա վնասվածքներ չեն հայտնաբերել, և իրենց նկատմամբ կիրառված բռնությունների մասին վերջիններս չեն հայտարարել:

Ստացվել և ուսումնասիրվել են թիվ 18130813 քրեական գործի նյութերը, համաձայն որոնց՝ Ռ.Մուրադյանը ոստիկանության Մուշի բաժին բերման է ենթարկվել 2013թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 20.15-ին: Ռ.Մուրադյանը և Ա.Մխիթարյանը որպես կասկածյալներ և մեղադրյալներ ցուցմունքներ տալու ժամանակ չեն հայտնաբերվել, որ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են խոշտանգումների, իսկ Ռ.Մուրադյանը պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ անձամբ գրավոր կերպով հայտարարել է համապատասխան արձանագրություններում:

Հիշյալ հանգամանքները ստուգելու համար հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ. և ստացված պատասխանի համաձայն՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Ռ.Մուրադյանը և Ա.Մխիթարյանը ոստիկանության Մուշի բաժին բերման են ենթարկվել համապատասխանաբար 2013թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 20.15-ին, և 2013թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 23.45-ին:

Ըստ ստացված տեղեկությունների՝ Ա.Մխիթարյանի ավտոմեքենայի զննության ժամանակ, բացի գործողության մասնակիցներից և հրավիրված անձանցից, որևէ կողմնակի անձ զննության կատարման վայրում չի եղել, ինչպես նաև տվյալ գործողությանը ներկա չեն գտնվել տուժողներ Նիկիտա Կոլեսնիկովը և Պավել Պանովը: Ա.Մխիթարյանին և Ռ.Մուրադյանին ոստիկանության Մուշի բաժնում բռնության և խոշտանգումների ենթարկելու, ոստիկանության ծառայողների կողմից նրանց նկատմամբ նվաստացուցիչ գործողություններ կատարելու վերաբերյալ՝ ձեռնարկված միջոցառումներով՝ որևէ տեղեկություն չի ստացվել:

Ռ.Մուրադյանին 2013թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 15-ին ոստիկանության Մուշի բաժին բերման ենթարկելու և համապատասխան արձանագրությունը ժամը 20.15-ին կազմելու մասին տեղեկությունը ստուգելու նպատակով ստացվել են Արթուր Գրիգորյանի և Ռ.Մուրադյանի բջջային հեռախոսներից կատարված զանգերի և դրանք սպասարկած ալեհավաք կայանների տվյալների վերծանումները:

Վերծանումների զննությամբ պարզվել է, որ 2013թ. հոկտեմբերի 27-ին Արթուր Գրիգորյանի և Ռոբերտ Մուրադյանի հեռախոսահամարների միջև կատարվել է ընդհանուրը 6 զանգ: Դրանցից հինգը՝ Ռ.Մուրադյանի հեռախոսահամարից ժամը 14.14-ին, 14.37-ին, 16.17-ին, 19.46-ին և 20.31-ին զանգահարել են Մ.Գրիգորյանի հեռախոսահամարին, որոնց միջև

տեղի են ունեցել տարբեր տնողությունների խոսակցություններ: Նույն օրը, ժամը 16.33-ին, Մ.Գրիգորյանի հեռախոսահամարից զանգահարել են Ռ.Մուրադյանի՝ համարին: Բոլոր դեպքերում Մ.Գրիգորյանի հիշյալ հեռախոսահամարի զանգերը սպասարկվել են Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 46 հասցեում տեղակայված ալեհավաքների կողմից, իսկ Ռ.Մուրադյանի հեռախոսահամարը՝ 14.14-ին՝ Շեդրինի 217 հասցեում, 14.33-ին՝ Խրիմյան Հայրիկ 46, 14.37-ին՝ Սևյան 47, 16.17-ին՝ Բուլվարային 1, 19.46-ին՝ Սավոյան 20 և 20.31-ին՝ Գերցենի փողոց հասցեներում տեղակայված ալեհավաք կայանների կողմից:

Զննությամբ պարզվել է նաև, որ ոստիկանության Մուշի բաժնի տարածքը և Ռ.Մուրադյանի բնակության վայր հանդիսացող Գ.ՆԺդեհի 7 հասցեն միաժամանակ սպասարկող, Խրիմյան Հայրիկ փողոցի 46 հասցեում տեղակայված 28305208026331 համարի ալեհավաքի կողմից սպասարկված միակ զանգը հիշյալ համարների միջև տեղի է ունեցել 2014թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 16.33 -ին, ինչը հաստատում է այն հանգամանքը, որ 16.33-ին Ռ.Մուրադյանը դեռ գտնվել է իրենց տանը և չէր կարող ժամը 15-ին բերման ենթարկված լինել ոստիկանության Մուշի բաժին, քանի որ ըստ Շ.Մուրադյանի ցուցմունքի՝ իրենք Մ.Գրիգորյանին զանգահարել են իրենց տանից:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանից ստացվել են Ռ.Մուրադյանի և Ա.Մխիթարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և դրանց ժամկետները երկարացնելու միջնորդությունների քննարկումների ձայնագրությունները, որոնց զննությամբ պարզվել է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և դրա ժամկետները երկարացնելու միջնորդությունների քննարկման ժամանակ Ռ.Մուրադյանը և Ա.Մխիթարյանն իրենց նկատմամբ ոստիկանության Մուշի բաժնի աշխատակիցների կողմից խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ հայտարարություններ չեն արել:

Ինչ վերաբերում է Ա.Մխիթարյանի այն հայտարարությանը, որ քննիչները չեն արձանագրել ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություններ գործադրելու մասին արված հայտարարությունը՝ հերքվել է ինչպես քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի, այնպես էլ Ա.Մխիթարյանի պաշտպան Ժ.Պետրոսյանի ցուցմունքներով:

Ռ.Մուրադյանի հայտարարությունն այն մասին, թե ինքնակամ է ներկայացել ոստիկանության բաժին՝ հերքվել է ինչպես Ռ.Մուրադյանի և Շ.Մուրադյանի, այնպես էլ Մ.Գրիգորյանի ցուցմունքներով, համաձայն որոնց՝ <<Ռ.Մուրադյանը Մ.Գրիգորյանի հետ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի մոտ հանդիպել է վերջինիս կողմից իրականացված օպերատիվ միջոցառումների արդյունքում, այլ ոչ թե կամովին ներկայացել է ոստիկանության Մուշի բաժին, իսկ հիշյալ տեղից արդեն բերման է ենթարկվել, քանզի Մ.Գրիգորյանը պահանջել է իր հետ ներկայանալ բաժին՝ միաժամանակ ապահովելով նրա հնարավոր փախուստի կանխումը>>:

<<Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշման մեջ քննիչը պատճառաբանելով, որ <<քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողությունները՝ հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման նպատակով, և գնահատելով նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ չի հիմնավորվել ու չի հաստատվել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի նախկին պետ Սարգիս Մարտիրոսյանի, ՔՀԲ պետի տեղակալ Խաչատուր Աշոտի Պետրոսյանի, ՔՀԲ օպերլիազորներ Հակոբ Գեղամի Աղաբեկյանի, Գուրգեն Արամի Ալեքսանյանի և նույն բաժնի նախկին օպերլիազոր Արթուր Լևոնի

Գրիգորյանի կողմից Ռոբերտ Մուրադյանի և Անդրանիկ Մխիթարյանի նկատմամբ բռնություններ կամ արժանապատվությունը նվաստացնող այլ միջոցներ կիրառելու, նույն բաժնի օպերլիազոր Կարեն Մարտիրոսյանի և Արթուր Գրիգորյանի կողմից Ռ.Մուրադյանին ոստիկանության բաժին բերման ենթարկելու վերաբերյալ կեղծ արձանագրություն կազմելու, նույն բաժնում ազատությունից ապօրինի զրկելու, ոստիկանության աշխատակցի կողմից Ա.Մխիթարյանի ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերված դանակը Ն.Կոլեսնիկովին և Պ.Պանովին ցույց տալու, ինչպես նաև՝ քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի կողմից՝ իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կիրառած խոշտանգումների մասին Ռ.Մուրադյանի հայտարարությունները չարձանագրելու հանգամանքները, և դրանք հիմնավորելու համար հնարավոր չի եղել ձեռք բերել բավարար ապացույցներ, իսկ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառվել են, ուստի, նշված փաստերով Սարգիս Մարտիրոսյանի, Խաչատուր Պետրոսյանի, Հակոբ Աղաբեկյանի, Գուրգեն Ալեքսանյանի, Արթուր Գրիգորյանի, Կարեն Մարտիրոսյանի, Հայկ Մարտիրոսյանի, Վիգեն Մարգարյանի կամ ոստիկանության այլ աշխատակիցների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ և 314-րդ հոդվածներով հետապնդում չի կարող իրականացվել՝ վերջիններիս արարքներում հանցակազմի բացակայության հիմքով>>:

Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ռ.Գևորգյանի <<Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> 03.10.2014թ. որոշման վերաբերյալ <<ՀՔԱ Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի և վերջինիս ներկայացուցիչ Ա.Զալյանի բողոքը, արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են բոլոր հնարավոր և անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողությունները հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման նպատակով, և գնահատելով նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ չի հիմնավորվել ու չի հաստատվել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի նախկին պետ Սարգիս Մարտիրոսյանի, ՔՀԲ պետի տեղակալ Խաչատուր Աշոտի Պետրոսյանի, ՔՀԲ օպերլիազորներ Հակոբ Գեղամի Աղաբեկյանի, Գուրգեն Արամի Ալեքսանյանի և նույն բաժնի նախկին օպերլիազոր Արթուր Լևոնի Գրիգորյանի կողմից Ռոբերտ Մուրադյանի և Անդրանիկ Մխիթարյանի նկատմամբ բռնություններ կամ արժանապատվությունը նվաստացնող այլ միջոցներ կիրառելու, նույն բաժնի օպերլիազոր Կարեն Մարտիրոսյանի և Արթուր Գրիգորյանի կողմից Ռ.Մուրադյանին ոստիկանության բաժին բերման ենթարկելու վերաբերյալ կեղծ արձանագրություն կազմելու, նույն բաժնում ազատությունից ապօրինի զրկելու, ոստիկանության աշխատակցի կողմից Ա.Մխիթարյանի ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերված դանակը Ն.Կոլեսնիկովին և Պ.Պանովին ցույց տալու, ինչպես նաև՝ քննիչներ Հայկ Մարտիրոսյանի և Վիգեն Մարգարյանի կողմից՝ իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կիրառած խոշտանգումների մասին Ռ.Մուրադյանի հայտարարությունները չարձանագրելու հանգամանքները, և դրանք հիմնավորելու համար հնարավոր չի եղել ձեռք բերել բավարար ապացույցներ, իսկ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառվել են, օրինական և հիմնավորված որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի որոշման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ /.../ եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ

դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝<<իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման>> պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն:

Մինչդեռ, իրենց խոշտանգելու վերաբերյալ Ա.Մխիթարյանի և Ռ.Մուրադյանի տված հաղորդումներում և ցուցմունքներում արված հայտարարությունների՝ վստահելիության չափանիշին համապատասխանության հանգամանքը կասկածի տակ է դրվում ինչպես խոշտանգման փաստի մասին վկայող օբյեկտիվ տվյալների բացակայության, այնպես էլ իրենց ենթադրաբար խոշտանգելուց շուրջ հինգ ամիս անց այդ մասին հայտարարելու պատճառով:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասից չի բխում նաև վերաքննիչ բողոքի պահանջն այն մասին, որով բողոք բերած անձը խնդրում է վերացնել <<Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին>> ՀՀ հատուկ քննչական ծառայության 2014թ. հոկտեմբերի 03-ի որոշումը և գործն ուղարկել նախաքննության: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ բողոքը ճանաչվում է հիմնավորված, դատարանը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, այլ ոչ թե վերացնում է բողոքարկվող որոշումը:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանը <<ՀՔԱ Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի բողոքը քննության առնելիս՝ գտնելով, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը չիրականացնելու մասին որոշումը կայացվել է օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, օրինական և հիմնավորված որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին: Ուստի, բերված վերաքննիչ բողոքը բավարարելու և առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ, 290-րդ, 393-րդ և 394-րդ հոդվածներով, վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Դիմողի ներկայացուցիչ Ա.Զալյանի վերաքննիչ բողոքը մերժել, իսկ <<Բողոքը քննության առնելու մասին>> Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. մարտի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Սույն որոշման դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այն ստանալու օրվանից տասնհինգօրյա ժամկետում՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատին:

Իսկականի հետ ճիշտ է՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ս.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ